ՆԱԶԱՐ.– (Կեղծ գործնական եւ հասարակ։) Լսիր։ Ուստիան, մի քիչ թագաւորական գործ ունիմ, գնա միւս օթախը։

ՈՒՍՏԻԱՆ.– Մե՜ղա։ Սիրուն կնիկները ներս առ՝ թէ «թագաւորական գո՞րծ ունեմ»։ Էս եղաւ թագաւորական գո՞րծ։

ՆԱԶԱՐ.– Էդպէ՜ս է, Ուստիան խանում, էդպե՜ս է։

ՈՒՍՏԻԱՆ.– Ի՞նչն է էդպէս։ Էնպէս ես խօսում, կարծես թէ էստեղ թագուհի չեմ, իրաւունք չունեմ։

ՆԱԶԱՐ.– (Սրտնեղ) Թագուհիները պիտի գան։ Տէրութեան գործ ունիմ, մի ուշացնի։ Գնա միւս օթախը։ (Լռութիւն։ Նազարը սպասում է, որ Ուստիանը գնա։ Սենեկապետը նայում է վարագոյրի ճեղքից։ Նազարը տեսնում է այդ ու հազում։)

ՈՒՍՏԻԱՆ.– (Նոր շարժումով) Ի՞նչ եմ ասում, Նազար, ես ըլեմ աշխարհքի ազնիւ թագուհի։

ՆԱԶԱՐ.– Չես կարող։

ՈՒՍՏԻԱՆ.– Կարող եմ։

ՆԱԶԱՐ.– Չէ, չէ՛։

ՈՒՍՏԻԱՆ.– Է, լաւ, ի՞նչ տեսակ բան է, որ չեմ կարող։

ՆԱԶԱՐ.– (Երգում է քթի տակ, կիսատ) Ա՜ման, ա՜ման այ ջաա՜ան։ (Ուստիանին) Ծանդր բան է թագաւորական գործը, ծանդր… (Սենեկապետին) Է՛յ, գեադա՞։ (Սենեկապետը ներս է գալիս) Գնա մի քիչ անուշ ջուր բեր, փչի վրաս։ (Սենեկապետը դուրս է վազում։) Է՛հ… (Շինծու թթուած ձեւով) Աշխարհք թափուել է վրաս։ Հա՛ խե՛լք տուր, հա՛, քաջութիւն բանացրու, հա՛ էս արա, հա՛ էն արա։ Տնաշէններ, մի մենակ թողէք՝ խելքս գլուխս գայ։ (Սենեկապետը վազելով ներս է գալիս սպասաւորների հետ, որ փչում են անուշահոտ ջրերը եւ շտապով հեռանամ։)

ՈՒՍՏԻԱՆ.– Լաւ, էդ որ ուրիշների ես բերում, էլ ես սազական թագուհի չե՞մ :

ՆԱԶԱՐ.– (Լեզուն ծըպացնելով) Ծը՛։

ՈՒՍՏԻԱՆ.– Ինչի՞ համար։

ՆԱԶԱՐ.– Էնդուր։

ՈՒՍՏԻԱՆ.– Չէ, ասա մի տեսնենք ինչի՞ համար։

ՆԱԶԱՐ.– Ես ազնիւ ցեղից կնիկ պիտի առնեմ, որ ցեղս իսկը ազնուանայ։

ՈՒՍՏԻԱՆ.– Բա էդ անելու բան է, որ անում ե՞ս։

ՆԱԶԱՐ.– Մենք անող ենք, Ուստիան խանում։